



**ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐԻ  
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ**

**Ա Մ Փ Ո Փ Ա Գ Ի Ր**

*Այս տեղեկատվական ամփոփագիրը հանգամանորեն ընթերցելիս Դուք կարող եք ծանոթանալ Բանկի կողմից առաջարկվող ավանդատեսակների ցանկին, վերջիններիս տարեկան տոկոսադրույքներին և սպասարկման այլ պայմաններին:*

*Ընտրե՛ք Ձեզ հարմար ավանդատեսակ և դարձե՛ք Արդշինբանկի հազարավոր ավանդատուներից մեկը:*

*Մենք ուժեղ ենք միասին*

12.04.2016

Բանկն ավանդ է ընդունում Հայաստանի Հանրապետության դրամով, ԱՄՆ դոլարով, եվրոյով և ՌԴ ռուբլով:  
Ավանդը վերադարձվում է Ավանդատուին այն արժույթով, որով ներդրվել է ավանդը, եթե այլ բան նախատեսված չէ ավանդային պայմանագրով:  
Ավանդ մուծված հաշվով ընթացիկ բանկային գործառնություններ չեն իրականացվում և այդ հաշվի վրա չեն տարածվում բանկային հաշվի մասին կանոնները:  
Ավանդային հաշիվների քաղվածքները յուրաքանչյուր գործարքից հետո ավանդատուներին տրամադրվում են անվճար՝ պայմանագրով սահմանված եղանակով (առձեռն, փոստի միջոցով, էլեկտրոնային կապի միջոցով): Ավանդային հաշվի քաղվածքի կրկնօրինակի, ինչպես նաև ավանդային հաշվի վերաբերյալ տեղեկատվությունները ավանդատուին տրամադրվում են համաձայն Բանկում գործող սակագների:  
Ավանդային հաշիվներին կարող են մուտքագրվել երրորդ անձանցից ստացված դրամական միջոցներ, եթե ավանդի պայմանագրով նախատեսված է համալրման/ավելացման իրավունք:  
Ավանդատուն իրավունք ունի ավանդի, ինչպես նաև տոկոսների օգտագործման և/կամ տնօրինման իրավունքը փոխանցել այլ անձի միայն նոտարական կարգով վավերացված լիազորագրի կամ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով դրան հավասարեցված այլ մարմինների կողմից հաստատված լիազորագրի հիման վրա:  
Ժամկետային ավանդի գումարը կամ դրա մի մասը մինչև սահմանված ժամկետի ավարտը Ավանդատուի պահանջով վերադարձնելիու դեպքում վերադարձվող մասի նկատմամբ Բանկը տոկոսները հաշվարկում և Ավանդատուին վճարում է Բանկի սակագներով սահմանված բանկային հաշվի օրական մնացորդի վրա կիրառվող տարեկան տոկոսադրույքով՝ կատարելով նախկինում վճարած տոկոսների վերահաշվարկ՝ վերադարձվող Ավանդի մասով, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով և տվյալ ավանդատեսակի պայմաններով: Ավանդի գումարի մի մասը նվազեցնելուց հետո ավանդային պայմանագիրը գործում է Բանկի

տնօրինության տակ մնացած ավանդի մասով, և դրա դիմաց տոկոսները շարունակվում են հաշվեգրվել ավանդային պայմանագրով նախատեսված չափով  
Բանկը պարտավորվում է ավանդի ընդունման պայմաններում յուրաքանչյուր անգամ կատարված փոփոխությունները հրապարակել՝ համաձայն գործող օրենսդրության:

### ՏՈԿՈՍՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳ

Բանկն ավանդի վրա հաշվարկված տոկոսները վճարում է ՀՀ դրամով:  
Բանկն ավանդի գումարի վրա տոկոսները հավելագրում է ավանդը Բանկ մուտք լինելուն հաջորդ օրվանից մինչև այն Ավանդատուին վերադարձնելու կամ Ավանդատուի ավանդային հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրը:  
Ավանդի գումարից տոկոսներն Ավանդատուին վճարվում են Բանկային ավանդի պայմանագրով սահմանված ժամկետում՝ ավանդից առանձին, իսկ տոկոսները Բանկային ավանդի պայմանագրով սահմանված ժամկետում Ավանդատուի կողմից չպահանջելու դեպքում, դրանք ավանդին չեն ավելանում, այլ փոխանցվում են Ավանդատուի բանկային հաշվին և վճարվում են Ավանդատուին՝ վերջինիս առաջին իսկ պահանջով:  
Ավանդի դիմաց հաշվարկված տոկոսները կանխիկ վճարելիս կանխիկացման վճար չի գանձվում: Հաշվին անկանխիկ մուտք եղած գումարից ձևակերպված Ավանդի գումարը փաստացի ներդրման ամսաթվից հաշված 60 (վաթսուն) օրացույցային օր հետո կանխիկ ստանալու դեպքում Բանկի սակագներով նախատեսված կանխիկացման վճարը չի գանձվում:  
Բանկը, հանդիսանալով հարկային գործակալ, ֆիզիկական անձ-Ավանդատուի հարկային պարտավորությունները կատարելու նպատակով Ավանդատուին վճարվելիք տոկոսագումարից իրականացնում է գանձում ՀՀ օրենսդրությամբ, իսկ ԼՂՀ-ում

գործող մասնաճյուղերում՝ ԼՂՀ օրենսդրությամբ գանձման ենթակա հարկերը:


Ժամկետային ավանդի համար սահմանված տոկոսների չափը, որը քաղաքացին ներդրել է որոշակի ժամկետի ավարտից կամ պայմանագրով նախատեսված հանգամանքները վրա հասնելուց հետո այն հետ ստանալու պայմանով, Բանկը չի կարող միակողմանի նվազեցնել:

### ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐ

Ֆիզիկական անձանց բանկային հաշիվների օրական մնացորդի դիմաց Բանկը վճարում է սակագներով նախատեսված չափով:  
Հաշվի օրական մնացորդի նկատմամբ կիրառվող տոկոսները վճարվում են յուրաքանչյուր եռամսյակի վերջին աշխատանքային օրը:  
Բանկի կողմից բանկային հաշիվների օրական մնացորդի վրա կիրառվող տարեկան տոկոսադրույքի չափը նվազեցնելու դեպքում տոկոսների նոր չափը կիրառվում է Բանկի ինտերնետային կայքում դրանց տեղադրման օրվանից: Տոկոսների նոր չափի վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է Բանկի կորպորատիվ [www.ardshinbank.am](http://www.ardshinbank.am) կայքում:

### ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐ

Ձեր հաշվում առկա միջոցների նկատմամբ տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Իսկ տարեկան տոկոսային եկամտաբերությունը ցույց է տալիս, թե որքան եկամուտ կստանայիք Դուք, եթե Ձեր ավանդի դիմաց ստացված տոկոսագումարները վերաներդնեիք ավանդի տեսքով:



## ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐ «ՍՏԱՆԴԱՐՏ»

Տոկոսները ժամկետի վերջում վճարմամբ								
Ժամկետը	AMD		USD		EUR		RUB	
	մինչև 10 մլն. ներառյալ	10 մլն. - 100 մլն.	մինչև 10'000 ներառյալ	10'000-200'000	մինչև 10'000 ներառյալ	10'000-200'000	մինչև 1 մլն. ներառյալ	1 մլն. -6 մլն.
20 - 29 օր	6.0%	5.75%	2.0%	1.5%	0.1%		0.1%	
30 - 89 օր	9.0%	8.75%	3.0%	2.5%				
90 - 179 օր	12.0%	11.75%	6.0%	5.5%	3.7%	3.3%	4.7%	4.4%
180- 365 օր	12.0%	11.75%	6.5%	6.0%	4.3%	4.1%	5.8%	5.6%
366- 549 օր	12.0%	11.75%	7.0%	6.75%	4.5%	4.3%	6.0%	5.8%
550- 730 օր	12.0%	11.75%	6.0%	5.75%	4.7%	4.5%	6.2%	6.0%

Տոկոսները եռամսյա վճարմամբ								
Ժամկետը	AMD		USD		EUR		RUB	
	մինչև 10 մլն. ներառյալ	10 մլն. - 100 մլն.	մինչև 10'000 ներառյալ	10'000-200'000	մինչև 10'000 ներառյալ	10'000-200'000	մինչև 1 մլն. ներառյալ	1 մլն. -6 մլն.
90 - 179 օր	11.5%	11.3%	5.8%	5.3%	3.5%	3.2%	4.5%	4.2%
180- 365օր	11.5%	11.3%	6.2%	5.8%	4.1%	3.9%	5.6%	5.4%
366- 549 օր	11.5%	11.3%	6.8%	6.6%	4.3%	4.1%	5.8%	5.6%
550- 730 օր	11.5%	11.3%	5.9%	5.6%	4.5%	4.3%	6.0%	5.8%

Ամենամսյա տոկոսների վճարմամբ								
Ժամկետը	AMD		USD		EUR		RUB	
	մինչև 10 մլն. ներառյալ	10 մլն. - 100 մլն.	մինչև 10'000 ներառյալ	10'000-200'000	մինչև 10'000 ներառյալ	10'000-200'000	մինչև 1 մլն. ներառյալ	1 մլն. -6 մլն.
30 - 89 օր	8.6%	5.5%	2.9%	2.4%	0.1%		0.1%	
90 - 179 օր	11.4%	11.2%	5.6%	5.2%	3.4%	3.1%	4.4%	4.1%
180- 365 օր	11.4%	11.2%	6.1%	5.6%	4.0%	3.8%	5.5%	5.3%
366- 549 օր	11.4%	11.2%	6.6%	6.4%	4.2%	4.0%	5.6%	5.5%
550- 730 օր	11.4%	11.2%	5.6%	5.5%	4.4%	4.2%	5.8%	5.6%

Ավելացման իրավունքով և տոկոսները ժամկետի վերջում վճարմամբ								
Ժամկետը	AMD		USD		EUR		RUB	
	մինչև 10 մլն.* ներառյալ	10 մլն. - 100 մլն.*	մինչև 10'000* ներառյալ	10'000-200'000*	մինչև 10'000* ներառյալ	10'000-200'000*	մինչև 1 մլն.* ներառյալ	1 մլն. -6 մլն.*
20 - 29 օր**	5.8%	5.1%	1.8%	1.3%	0.1%		0.1%	
30 - 89 օր**	8.4%	5.3%	2.7%	2.2%				
90 -179 օր**	11.2%	11.0%	5.4%	5.0%	3.2%	2.9%	4.2%	3.9%
180- 365 օր**	11.2%	11.0%	5.8%	5.4%	3.8%	3.6%	5.3%	5.1%
366- 549 օր**	11.2%	11.0%	6.5%	6.3%	4.0%	3.8%	5.4%	5.3%
550- 730 օր**	11.2%	11.0%	5.5%	5.4%	4.2%	4.0%	5.6%	5.4%

\* Նշված փոկոսադրույքները կիրառվում են ավանդի գումարի մնացորդի նկատմամբ:

Ավանդի գործողության ընթացքում գումարի ավելացման և կամ նվազեցման դեպքում ավանդի նկատմամբ հաշվարկվող փոկոսադրույքը փոփոխվում է ըստ մնացորդի մեծության:

\*\* Ավանդի գործողության ժամկետի վերջին 60 օրում ավելացվող գումարի փոկոսների հաշվարկը կատարվում է փարեկան 0.1% փոկոսադրույքով:

1. Անկանխիկ մուտքագրված գումարից ձևակերպված Ավանդի գումարը փաստացի ներդրման ամսաթվից հաշված 60 (վաթսուն) օրացուցային օր հետո կանխիկ ստանալու դեպքում Բանկի սակագներով նախատեսված կանխիկացման վճարը չի գանձվում:
2. Նշված ժամկետներից և/կամ գումարներից փարբերվող պայմաններով ավանդ ներդրվելու դեպքում՝ ավանդների փարեկան փոկոսադրույքները և սպասարկման պայմանները սահմանվում են լրացուցիչ գրավոր համաձայնությամբ:
3. Հաշվեգրված փոկոսներից պահվում է օրենսդրությամբ նախատեսված հարկերը:
4. Ավանդը կամ դրա մի մասը ժամեկտրից շուտ վերադարձնելու դեպքում Բանկը փոկոսները հաշվարկում և Ավանդատուին վճարում է ցպահանջ՝ 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) փոկոս դրույքաչափով:

## Տարեկան տոկոսային եկամտաբերությունը հաշվարկվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգի:

### Տարեկան տոկոսային եկամտաբերության (APY) հաշվարկման օրինակ ( \* առանց եկամտահարկի)

ԺԱՄԿԵՏԻ ՎԵՐՋՈՒՄ ՏՈԿՈՍՆԵՐԻ ՎՃԱՐՄԱԲ	ԵՌԱՄՍՅԱ ՏՈԿՈՍՆԵՐԻ ՎՃԱՐՄԱԲ	ԱՄԵՆԱՄՍՅԱ ՏՈԿՈՍՆԵՐԻ ՎՃԱՐՄԱԲ
Ավանդի գումարը՝ 100000 ՀՀ դրամ Տարեկան տոկոսադրույքը՝ 13.5% Ավանդի ժամկետը՝ 365 օր Եկամտահարկի չափ՝ 10%	Ավանդի գումարը՝ 100000 ՀՀ դրամ Տարեկան տոկոսադրույքը՝ 12.9% Ավանդի ժամկետը՝ 365 օր Եկամտահարկի չափ՝ 10%	Ավանդի գումարը՝ 100000 ՀՀ դրամ Տարեկան տոկոսադրույքը՝ 12.7% Ավանդի ժամկետը՝ 365 օր Եկամտահարկի չափ՝ 10%
Հաշվարկված տոկոսագումարը՝ $100000 * 13.5\% / 365 * 363 = 13426.0$ Եկամտահարկ՝ $13426.0 * 10\% = 1342.6$ Ավանդատուի ստացած եկամուտը՝ 12083.4 ՀՀ դրամ	Հաշվարկված տոկոսագումարը՝ $100000 * 12.9\% / 365 * 363 = 12829.3$ Եկամտահարկ՝ $12829.3 * 10\% = 1282.9$ Ավանդատուի ստացած եկամուտը՝ 11546.4 ՀՀ դրամ	Հաշվարկված տոկոսագումարը՝ $100000 * 12.7\% / 365 * 363 = 12630.4$ Եկամտահարկ՝ $12630.4 * 10\% = 1263.0$ Ավանդատուի ստացած եկամուտը՝ 11367.4 ՀՀ դրամ
Տարեկան տոկոսային եկամտաբերությունը (APY)՝ $100000 = 113426.0 / (1 + APY)^{365/365}$  APY = 13.43% *	Տարեկան տոկոսային եկամտաբերությունը (APY)՝ $100000 = 3207.3 / (1 + APY)^{90/365} + 3207.3 / (1 + APY)^{180/365} +$ $3207.3 / (1 + APY)^{270/365} + 103207.3 / (1 + APY)^{365/365}$  APY = 13.47% *	Տարեկան տոկոսային եկամտաբերությունը (APY)՝ $100000 = 1052.5 / (1 + APY)^{30/365} + 1052.5 / (1 + APY)^{60/365} + \dots +$ $101052.5 / (1 + APY)^{365/365}$  APY = 13.40% *



## ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՎԱՆԴ “ՈՒՆԻՎԵՐՍԱԼ”

Ավանդի արժույթ	ՀՀ դրամ			ԱՄՆ դոլար			Եվրո			ՌԴ ռուբլի			
Ավանդի նվազագույն գումար	200,000			500			500			20,000			
Ավանդի առավելագույն գումար	100,000,000			200,000			200,000			5,000,000			
Ավանդի ներդրման ժամկետ օրերով	90-179	180-270	271-365	90-179	180-270	271-365	90-179	180-270	271-365	90-179	180-270	271-365	
Ավանդի տարեկան տոկոսադրույք ըստ տոկոսների վճարման հաճախականություն	Ժամկետի վերջում	8,5%	9,0%	10,0%	4,0%	5,0%	5,2%	2,5%	3,0%	3,5%	3,0%	4,0%	5,0%
	Եռամսյա	8,2%	8,5%	9,4%	3,8%	4,8%	5,0%	2,4%	2,9%	3,3%	2,9%	3,9%	4,8%
Այլ պայմաններ	<p>Ավելացման հնարավորություն*</p> <p>Փոխարկման իրավունք**</p>												

\* Ավանդի գործողության ժամկետի վերջին 30 օրվա ընթացքում ավանդների լրացման դեպքում լրացվող գումարի տոկոսների հաշվարկը ՀՀ դրամի, ԱՄՆ դոլարի և եվրոյի համար կատարվում է՝ ելնելով 2% տարեկան տոկոսադրույքից, իսկ ՌԴ ռուբլու համար՝ 1%:

Նշված ժամկետներից և/կամ գումարներից տարբերվող պայմաններով ավանդ ներդրվելու դեպքում՝ ավանդների տարեկան տոկոսադրույքները և սպասարկման պայմանները սահմանվում են լրացուցիչ գրավոր համաձայնությամբ:

Ավանդատուի ցանկությամբ և գրավոր հանձնարարությամբ Բանկն ավանդային հաշվին առկա դրամական միջոցները փոխարկում է Բանկի կողմից որպես “Ունիվերսալ” ավանդ ընդունվող արժույթների, Բանկի կողմից տվյալ օրվա համար սահմանված կանխիկ փոխարժեքով (առանց շեղման)՝ պահպանելով հաշվեգրված տոկոսները, և հաշվառում է տվյալ արժույթով ավանդային հաշվում՝ սկզբնական ավանդի պայմանագրի գործողության ժամկետով և պայմաններով, իսկ տոկոսները հաշվեգրվում են “Ունիվերսալ” ավանդի տվյալ փոխարկված արժույթի համար Բանկի սահմանած սկզբնական տոկոսադրույքով:

Ավանդի արժույթը փոխարկելիս փոխարկվում են նաև կուտակված տոկոսները՝ Բանկի կողմից տվյալ օրվա համար սահմանված կանխիկ փոխարժեքով (առանց շեղման):

Եթե Ավանդատուն Բանկին դիմում է փոխարկել իր ավանդի արժույթը մինչև ժամը 15:00, ապա գործարքը կատարվում է նույն օրը, հակառակ դեպքում՝ հաջորդ բանկային օրը:

Պայմանագրի գործողության ընթացքում Ավանդատուն ցանկացած ժամանակ իրավունք ունի փոխարկել ավանդի արժույթը: Փոխարկումների միջև ընկած ժամանակահատվածը պետք է լինի առնվազն 90 օր:

Այն դեպքում, երբ ավանդը կամ ավանդի մի մասը, մինչև առաջին փոխարկումն Ավանդատուի պահանջով վերադարձվում է մինչև սահմանված ժամկետի ավարտը, ապա ավանդի վերադարձվող մասի նկատմամբ Բանկը տոկոսները հաշվարկում և Ավանդատուին վճարում է ցպահանջ ավանդների համար սահմանած դրույքաչափով և կարգով՝ ելնելով ավանդի սկզբնական գումարին ավելացված գումարի փաստացի ներդրված օրերի

քանակից, կատարելով նախկինում վճարած տոկոսների վերահաշվարկ՝ վերադարձվող ավանդի մասով, իսկ դրա արդյունքում ավել վճարված տոկոսագումարները պահվում են ժամկետային ավանդից, և պայմանագիրը գործում է Բանկի տնօրինության տակ մնացած ժամկետային ավանդի մասով, որի դիմաց տոկոսները շարունակվում են հաշվեգրվել պայմանագրով նախատեսված չափով:

Այն դեպքում, երբ ավանդը կամ ավանդի մի մասը, առաջին կամ հետագա փոխարկումներից հետո Ավանդատուի պահանջով վերադարձվում է մինչև սահմանված ժամկետի ավարտը, ապա Բանկը տոկոսները հաշվարկում և Ավանդատուին վճարում է ցպահանջ ավանդների համար Բանկի կողմից սահմանված դրույքաչափով և կարգով՝ ելնելով ավանդի սկզբնական գումարին ավելացված գումարի փաստացի ներդրված օրերի քանակից, կատարելով նախկինում վճարած տոկոսների վերահաշվարկ, որի արդյունքում ավել վճարված տոկոսագումարները պահվում են ժամկետային ավանդից: Սույն հանգամանքները վրա հասնելու դեպքում, կողմերի համաձայնությամբ պայմանագիրը համարվում է լուծված, իսկ իրավունքներն ու պարտականությունները՝ դադարած:

Հաշվեգրված տոկոսներից պահվում է օրենսդրությամբ նախատեսված հարկերը:

Կանխիկով ներդրված ավանդի գումարը կամ դրա մի մասը հաճախորդի կարգադրությամբ այլ հաշվին փոխանցելու դեպքում, Բանկը հաճախորդից գանձում է կանխիկի մուտքագրման միջնորդավճար՝ համաձայն Բանկում գործող սակագների:

**Տարեկան տոկոսային եկամտաբերության (APY) հաշվարկման օրինակ ( \* առանց եկամտահարկի)**

<p>Ավանդի գումարը՝ 250000 ՀՀ դրամ,                  Տարեկան տոկոսադրույքը՝ 10% ,                  Ավանդի ժամկետը՝ 365 օր,                  181-րդ օրը ավելացվել է 100000 ՀՀ դրամ,                  Եկամտահարկի չափ՝ 10%</p>	<p>Հաշվարկված տոկոսագումարը՝ <math>250000 \cdot 10\% / 365 \cdot 363 + 100000 \cdot 10\% / 365 \cdot 183 = 29876.7</math>                  Եկամտահարկ՝ <math>29876.7 \cdot 10\% = 2987.67</math>                  Ավանդատուի ստացած եկամուտը՝ 26889.04 ՀՀ դրամ:</p>
Տարեկան տոկոսային եկամտաբերությունը (APY)՝	
ԺԱՄԿԵՏԻ ՎԵՐՋՈՒՄ ՏՈԿՈՍՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՄԲ	ԱՄԵՆԱՄՍՅԱ ՏՈԿՈՍՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՄԲ
$250000 = 100000 / (1 + APY)^{180/365} + 379876.7 / (1 + APY)^{365/365}$  APY = 9.98% *	$250000 = 2489.7 / (1 + APY)^{30/365} + \dots + 9710.3 / (1 + APY)^{180/365} + 2489.7 / (1 + APY)^{210/365} + \dots + 352489.7 / (1 + APY)^{365/365}$  APY = 10.45% *



## ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՎԱՆԴ “ԴՐԱՄԱՅԻՆ +”

Ավանդի արժույթ		ՀՀ դրամ		
Ավանդի նվազագույն գումար		30,000		
Ավանդի առավելագույն գումար		100,000,000		
Ավանդի ներդրման ժամկետ		180-365 օր	366-549 օր	550-730 օր
Ավանդի տարեկան տոկոսադրույք ըստ տոկոսների վճարման հաճախականության	Ժամկետի վերջում	10,00%	10,00%	10,00%
	Եռամսյա	9,6%	9,6%	9,6%
Այլ պայմաններ		Ավելացման հնարավորություն* Ժամկետից շուտ ավանդի մասնակի նվազեցում**		

\* Ավանդի գործողության ժամկետի վերջին 30 օրվա ընթացքում ավանդների լրացման դեպքում լրացվող գումարի տոկոսների հաշվարկը կատարվում է՝ ելնելով 4 տարեկան տոկոսադրույքից:

\*\* Այն դեպքում, երբ նվազեցման պահին մասնակի նվազեցվող գումարը Բանկում

1. ներդրված է եղել 60-ից 180 օր, ապա Բանկը վերադարձվող գումարի տոկոսները հաշվարկում և Ավանդատուին վճարում է **3** տոկոսադրույքով:
2. ներդրված է եղել 180-ից 365 օր, ապա Բանկը վերադարձվող գումարի տոկոսները հաշվարկում և Ավանդատուին վճարում է **5** տոկոսադրույքով:
3. ներդրված է եղել 365 օրից ավել, ապա Բանկը վերադարձվող գումարի տոկոսները հաշվարկում և Ավանդատուին վճարում է **7** տոկոսադրույքով:
4. ներդրված է մինչև 60 օր ժամկետով, ապա Բանկն Ավանդի վերադարձվող մասի նկատմամբ տոկոսները հաշվարկում և Ավանդատուին վճարում է **0,1** տոկոսադրույքով

\*\*\* Նշված ժամկետներից և/կամ գումարներից տարբերվող պայմաններով ավանդ ներդրվելու դեպքում՝ ավանդների տարեկան տոկոսադրույքները և սպասարկման պայմանները սահմանվում են լրացուցիչ գրավոր համաձայնությամբ:

\*\*\*\* Հաշվեգրված տոկոսներից պահվում է օրենսդրությամբ նախատեսված հարկերը:

### Տարեկան տոկոսային եկամտաբերության (APY) հաշվարկման օրինակ ( \* առանց եկամտահարկի)

Ավանդի գումարը՝ 100'000 ՀՀ դրամ, Տարեկան տոկոսադրույքը՝ 12.0% , Ավանդի ժամկետը՝ 365 օր, Եկամտահարկի չափ՝ 10%	Հաշվարկված տոկոսագումարը՝ 11934.3 Եկամտահարկ՝ 11934.3*10% = 1193.4 Ավանդատուի ստացած եկամուտը՝ 10740.8 ՀՀ դրամ:
Տարեկան տոկոսային եկամտաբերությունը (APY)՝	
$100'000 = 11934.3 / (1 + APY)^{365/365}$ APY = 11.93% *	



## ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՎԱՆԴԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԾԱՆՈՒՑՈՒՄ

**Ֆիզիկական անձանց ավանդների հատուցումը երաշխավորված է օրենքով:**

### **ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՎԱՆԴԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՍԱՀՄԱՆԱԶԱՓԵՐԸ ԵՎ ԴՐԱ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ**

Եթե ավանդատուն ունի միայն դրամային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը 10'000'000 (տաս միլիոն) հայկական դրամ է .  
Եթե ավանդատուն ունի միայն արտարժույթային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը 5'000'000 (հինգ միլիոն) հայկական դրամ է .

Եթե ավանդատուն ունի դրամային և արտարժույթային բանկային ավանդներ, և դրամային բանկային ավանդի գումարը 5'000'000 (հինգ միլիոն) հայկական դրամից ավելի է, ապա երաշխավորվում է միայն դրամային ավանդը՝ մինչև 10'000'000 (տաս միլիոն) հայկական դրամով.

Եթե ավանդատուն ունի դրամային և արտարժույթային բանկային ավանդներ, և նրա դրամային բանկային ավանդի գումարը պակաս է 5'000'000 (հինգ միլիոն) հայկական դրամից, ապա երաշխավորվում է դրամային բանկային ավանդն ամբողջությամբ և արտարժույթային բանկային ավանդը՝ 5'000'000 (հինգ միլիոն) հայկական դրամի և հատուցված դրամային բանկային ավանդի տարբերության չափով:

Ավանդատուի “Արդշինբանկ” ՓԲ ընկերությունում ունեցած բոլոր դրամային ավանդները համարվում են մեկ ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների և ավանդատուի՝ բանկում ունեցած բոլոր արտարժույթային ավանդները համարվում են մեկ ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների:

Համատեղ ավանդը համարվում է առանձին ավանդ՝ բանկային ավանդի պայմանագրով սահմանված մասնաբաժնի չափով:

Եթե բանկային ավանդի պայմանագրով սահմանված չեն համատեղ բանկային ավանդի ավանդատուների մասնաբաժինները, ապա համատեղ բանկային ավանդն ավանդատուների միջև բաժանվում է հավասարաչափ:

Երաշխավորված ավանդների հատուցման ենթակա գումարները հաշվարկելիս առաջին հերթին հաշվարկվում են դրամային ավանդները, իսկ երկրորդ հերթին՝ արտարժույթային ավանդները:

### **ՀԱՏՈՒՑՄԱՆ ԴԵՊՔԸ**

Երաշխավորված ավանդների հատուցման դեպք (այսուհետ՝ “Հատուցման դեպք”) է համարվում “Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին” Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով “Արդշինբանկ” ՓԲԸ անվճարունակ կամ սնանկ ճանաչելը, և եթե “Արդշինբանկ” ՓԲԸ-ն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ ի վիճակի չէ օրենքով և պայմանագրերով սահմանված ժամկետներում վերադարձնել ավանդները:

### **ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

Երաշխավորված ավանդների հատուցումն իրականացնում է Ավանդների երաշխավորման հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) “Արդշինբանկ” ՓԲԸ կամ այլ բանկի միջոցով:



ՀՀ կենտրոնական բանկը Հատուցման դեպքն առաջանալու մասին Հիմնադրամին տեղեկացնում է դեպքը տեղի ունենալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում:

Հիմնադրամը տեղեկատվությունը ստանալու պահից եռօրյա ժամկետում կայացնում է ավանդները հատուցելու մասին որոշում, առնվազն 2000 տպաքանակ ունեցող մամուլում և առնվազն մեկ անգամ հանրային մեկ լրատվամիջոցով հայտարարություն է հրապարակում այդ մասին:

Հիմնադրամն այդ հայտարարությունը կարող է հրապարակել զանգվածային լրատվության այլ միջոցներում կամ օգտագործել ավանդատուներին տեղեկացնելու այլ եղանակ:

Հիմնադրամը հայտարարության հրապարակման պահից մեկամսյա ժամկետում մամուլում և զանգվածային լրատվության այլ միջոցներում հրապարակում է լրացուցիչ հայտարարություն:

Երաշխավորված ավանդների հատուցումն սկսվում է լրացուցիչ հայտարարությունը հրապարակվելու պահից:

Հիմնադրամը, լրացուցիչ հայտարարությունը հրապարակվելու պահից, երաշխավորված ավանդի գումարի վճարումն իրականացնող բանկի միջոցով սկսում է իրականացնել Ձեր ավանդների հատուցումը:

Երաշխավորված ավանդի գումարի վճարումն իրականացնող բանկին կարող եք դիմում ներկայացնել ոչ ուշ, քան հատուցումն սկսելու պահից մեկ տարվա ժամկետում:

Այդ ժամկետում՝ Ձեր կողմից դիմում չներկայացնելու դեպքում՝ Հիմնադրամը Ձեր երաշխավորված ավանդների հատուցում չի իրականացնում:

Բանկային ավանդի հատուցումը կատարվում է միայն հայկական դրամով:

Արտարժույթային բանկային ավանդի դրամական համարժեքությունը որոշվում է Հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի սահմանված պաշտոնական փոխարժեքով:

Երաշխավորված ավանդի գումարի հատուցումից հետո Ձեր՝ “Արդշինբանկ” ՓԲԸ հանդեպ ունեցած դրամական պահանջը հատուցված գումարի չափով համարվում է բավարարված:

Հատուցման առավելագույն չափը գերազանցող գումարը համարվում է “Արդշինբանկ” ՓԲԸ պարտավորությունը Ձեր նկատմամբ, որը Ձեզ է վերադարձվելու “Բանկերի և վարկային կազմակերպությունների մասին” Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Բանկային ավանդի պայմանագիրը ստորագրելու և կնքելու համար քաղաքացին Բանկին ներկայացնում է՝

### ԱՎԱՆԴԻ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

- անձը հաստատող փաստաթուղթ,
- հանրային ծառայության համարանիշ (ՀԾՀ) կամ ՀԾՀ չունենալու մասին տեղեկանք,



Հաճախորդի և Բանկի միջև ծագած ցանկացած վեճ և տարաձայնություն նախ և առաջ լուծվում է փոխադարձ բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ինչպես դատական կարգով, այնպես էլ ֆինանսական հաշտարարի միջոցով (ֆիզիկական անձանց դեպքում):